

ԱՆՈՒՆ ԶԱՎՈՐՅԱՆ, ԼԻՊԻ ՍԱՔԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՕՆԴԵՐԱՆՎԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԵՂԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Դերանուններին տրված սահմանումը բխում է «դերանուն» տերմինի ստուգաբանությունից՝ անվան դեր ունեցող: Ըստ այդմ, դերանունը միավոր է, որը դրվում է գոյականի փոխարեն: Խոսքի մասերի իր դասակարգման մեջ Տենիերը տարբերակում է ընդհանրական և առանձնահատուկ գոյականներ: Ըստ Տենիերի՝ ընդհանրական գոյականները դասական քերականության մեջ ներկայացված են դերանուններ կամ անորոշներ տերմինների ներքո: Տենիերը դերանվանը գոյականաբար օգտագործված ածականի իմաստ է վերագրում: Ըստ նրա՝ դերանունների մեծամասնությունն ածականական իմաստով օժտված գոյականի տեսակներ են: Սակայն, ըստ նրա, գոյություն ունեն ճշմարիտ գոյականներ, որոնց նա կոչում է ընդհանրական գոյականներ: Վերջիններս ունեն քերականական ինքնուրույն արժեք և ոչ մի ածականի համարժեքը չեն: Ըստ Տենիերի՝ ոչ մի ածական չի կարող փոխարինել moi, toi, lui, elle անձնական դերանուններին: Ուստի, առանց վարանելու նա դրանք անվանում է անձնական դերանուններ: Ինչ վերաբերում է անորոշներին, Տենիերը դրանց շարքին է դասում այն բառերը, որոնք արտահայտում են անորոշ իմաստ: Դրանք անորոշ գոյականներն են: Այսպիսով, ավանդական քերականության մեջ կան դերանուններ, որոնք համապատասխանում են ածականին: Այդ համակարգային համապատասխանությունը բնութագրական է ցուցական, ստացական, անորոշ և հարցական դերանունների մի մասին /Tessnière, 1976: 46/:

Դերանունները համեմատաբար միատարր շարահյուսական կարգ են կազմում, սակայն իրականացնում են իմաստաբանական և վերաբերական տարբեր գործառնություններ: Դերանունները շատ հազվադեպ են հանդես գալիս որպես առանձին գոյականի համարժեք: Որոշ դերանուններ (օր.՝ անձնական je, tu (ես և դու)) չեն փոխարինում ոչ մի գոյականի, քանի որ ուղղակի կերպով մատնանշում են իրենց վերաբերյալին (je-ն (ես) մատնանշում է այն անձին, որն ասում է՝ ես):

Շատ հաճախ, գոյականական խմբի համարժեքը լինելով հանդերձ, դերանունները, գործածվում են որպես այլ քերականական կարգերի համարժեքներ:

Այսպիսով, դերանունները կարող են փոխարինել.

- Անվանական որևէ խմբի հերթագայության՝ որոշիչ+գոյական, դրա հետ մեկտեղ գուրկ լինելով ձևափոխիչներից, օր.՝ Les réponses sont toutes arrivées sauf celle de Jean; նախադասության մեջ celle (*Պիեռի պատասխանը*) դերանունը փոխարինում է les réponses sont toutes arrivées (*բոլոր պատասխանները տեղ հասան*) անվանական խմբին, որը հայերենում թարգմանվում է՝ *Բոլոր պատասխանները տեղ հասան, բացի Պիեռի պատասխանից* :

- Գոյականի, օր.՝ J'ai oublié mon programme détaillé de la visite; peux-tu me prêter le tien (programme de toi) նախադասության մեջ programme détaillé de la visite (*այցելության մանրամասն ծրագիրը*) գոյականը իր լրացումով փոխարինվում է le tien (*քոնը, քո ծրագիրը*) դերանվամբ,

- Ածականի, օր.՝ Si tu es content, je le suis aussi, content (*գոհ*) ածականը փոխարինվում է le դերանվամբ և հայերենում թարգմանվում է՝ *Եթե դու գոհ ես, ես՝ նույնպես* :

- Նախդիրային խմբի, օր.՝ Il ressemble à son père / Il lui ressemble, à son père (*իր հայրիկին*) նախդիրային խումբը փոխարինվել է lui (*նրան*) դերանվամբ և հայերենում թարգմանվում է՝ *Նա նման է իր հայրիկին/ նա նրան նման է*:

- Նախադասության, օր.՝ Pierre nous aidera. Je le sais, Pierre nous aidera. *Պիեռը մեզ կօգնի* նախադասության փոխարեն գործածվել է le (*դա*) դերանունը, հայերենում թարգմանվում է՝ *Պիեռը մեզ կօգնի, ես դա գիտեմ*:

Այսպիսով, դերանուններն իրականացնում են տարբեր գործառույթներ: Նախադասության մեջ կարող են հանդես գալ ենթակայի, ուղիղ կամ անուղղակի խնդրի, գոյականի կամ ածականի, պարագայական լրացումների պաշտոնում:

Իմաստաբանական տեսանկյունից դերանունները համարվում են ոչ լիակատար կամ բաց ձևեր, որոնց կողավորված իմաստը բացի ընդհանրական հատկանիշներից իր մեջ ներառում է այնպիսի կանոնակարգեր, որոնք հնարավորություն են տալիս խոսողին փոխներ-

թափանցման տարբեր միջոցներով բացատրել այն, ինչին վերաբերում են:

Այս տեսանկյունից *on* դերանունն իր ուրույն տեղն ու նշանակությունն ունի ժամանակակից ֆրանսերենի դերանունների համակարգում: Քերականագետները այն դասում են թե՛ անորոշ, թե՛ անձնական դերանունների շարքին: Առաջին դեպքում հաշվի է առնվում *on*-ի անորոշ արժեքը, իսկ երկրորդ դեպքում՝ գրեթե բոլոր դեմքերին համարժեք գործածվելու հնարավորությունը: Ըստ Ժ. Դյուբուայի՝ *on*-ը չեզոքանում է անձնական դերանունների համակարգում և դիմային որոշակիություն չի կրում, սակայն բայր դրվում է երրորդ դեմքի եզակի թվով /Dubois, 1965:71/:

On դերանունը ռոմանական ծագում ունի: Ստուգաբանորեն *on* նշանակում է մարդ, լատինական *homo* բառից և ունեցել է հետևյալ զարգացումը՝ *hom-om-on*: *On*-ը լեզվում ունի գործածության երկու ձև: Խոսակցական լեզվում *on*-ը գործածության միայն մեկ ձև ունի: Գրավոր խոսքում *on*-ը կարող է գործածվել որոշյալ հոդով, ինչն էլ համարվում է նրա գործածության մյուս ձևը: Հենց այս ձևն էլ հաճախ իր գործածությունն է գտնում ֆրանսերեն գրական դասական լեզվում և կարող է գործածվել նախադասության սկզբում՝ *L'on*: Ըստ Ռեֆերովսկայայի և Վասիլևայի *on* դերանունը դասվում է անձնական դերանունների շարքին /Référovskaja, Vassiliéva, 1973 : 86/: Ըստ այս լեզվաբանների՝ *on* -ը գործածվում է միայն շնչավոր գոյականների փոխարեն. սա բխում է նրա ծագումնաբանությունից (*on* –*ho-mo*): Այն նախ և առաջ ցույց է տալիս անորոշ անձի կամ ընդհանրական որևէ մեկի, մարդկանց խմբի կամ էլ մարդուն առհասարակ: *On*-ը հիմնականում անանուն է: Պարտադիր չէ, որ այն մատնանշի խոսողին կամ խոսակցին՝ անհայտ մի անձի: Այն կարող է մատնանշել ցանկացած անձի, որի ինքնությունը չեն ցանկանում կամ խուսափում են բացահայտել: Հենց սրանով էլ *on*-ը հակադրվում է *il* դերանվանը, որը մատնանշում է կոնկրետ անձի: Ժամանակակից ֆրանսերենում իր անորոշ բնույթի շնորհիվ *on*-ը կարող է փոխարինել բոլոր անձնական դերանուններին: Այն կարող է վերաբերել արական կամ իգական, եզակի կամ հոգնակի շարույթներին, սակայն կարող է միայն գործածվել շնչավոր դասի փոխարեն:

Ժամանակակից ֆրանսերենը հիմնականում բանավոր խոսքում *on*-ը *nous*-ով (*մենք*) փոխարինելու մեծ միտում է ցուցաբերում: Եվ

միայն համատեքստն է մեզ օգնում զանազանելու նրա արժեքները: Կախված համատեքստից՝ *on* դերանունը կարող է ունենալ տարբեր արժեքներ: Ըստ այդմ էլ կատարվում է նրա թարգմանությունը: Անշուշտ, համատեքստը կարող է սահմանափակել *on*-ի անորոշությունը: Օրինակ՝ Անդրե ժիդի «*Հովերգական սիմֆոնիայից*» վերցված նախադասության մեջ.

Les enfants sont ravis parce que bientôt, disaient-ils, on sera forcé de sortir par les fenêtres /Gide, 1925: 29/.

Երեխաները հրճվանքի մեջ են, որովհետև, իրենց ասելով, շուտով ստիպված կլինենք ելումուտ անել պատուհաններից /ժիդ, Ա. 1997: 22/:

Օն դերանունն այստեղ հանդես է եկել իր հավաքական իմաստով՝ առաջին դեմք, հոգնակի թիվ՝ փոխարինելով ***երեխաներ*** գոյականին և ***մենք*** անձնական դերանվանը:

Սահմանափակությունը կարող է նաև կապված չլինել համատեքստի հետ, այլ պայմանավորված լինել իզակական կամ արական սեռի կամ հոգնակի թվի գործածությամբ: Ըստ այդմ էլ՝ *on*-ի հետ դրված բայը համաձայնեցվում է թվով և սեռով՝ այսպիսով ցույց տալով, թե տվյալ ասույթը ում է վերաբերում: *On*-ը, չնայած այն բանին, որ համարվում է երրորդ դեմքի դերանուն կարող է նաև ցույց տալ խոսողին կամ խոսակցին: Օրինակ՝ *Que servirait d'éveiller en Gertrude un espoir qu'on risque de devoir éteindre aussitôt ?* /Gide, 1925: 63):

Ի՞նչ իմաստ ունեւ Գերթրուդի մեջ հույս արթնացնել, եթե ստիպված պիտի լինեիք իսկույն հանգցնել:

Տվյալ օրինակում *Օն*-ը արտահայտում է ***մենք*** դերանվան իմաստ և համատեքստից ելնելով՝ հայերենում այն թարգմանվել է առաջին դեմք, հոգնակի թվի իմաստով:

Օն-ը կարող է վերաբերել արական կամ իզակական, եզակի կամ հոգնակի շարույթներին, սակայն կարող է միայն գործածվել շնչավոր դասի փոխարեն: Պատճառները, որոնք դրդում են խոսողին գործածել *on*-ը այլ անձնական դերանունների փոխարեն, կարող են լինել տարբեր՝ ցանկություն ընդգծելու հրամանը՝ ես-ին /առաջին դեմքին/ հավաքական ձև տալով, արհամարհանք կամ հպարտություն: Ինչպես վերևում ասվեց՝ գոյություն ունեն *on* անորոշ դերանվան թարգմանության զանազան ձևեր, բայց հենց բառը ինքնին

ճշգրիտ թարգմանություն չունի: Այնուամենայնիվ, մեծ մասամբ օտ-ը թարգմանվում է կրավորական սեռի միջոցով: Առավել հաճախ կրավորական սեռը ուղեկցվում է ուղիղ խնդիր դարձած ենթակայի հետ:

Ելնելով նախադասության իմաստից՝ օտ-ը կարող է թարգմանվել նաև *մենք, նրանք, նա* կամ *դու* դերանունների միջոցով: Օրինակ՝

Une manière commode de faire connaissance d'une ville est de chercher comment on y travaille, comment on y aime et comment on y meurt (Camus, 1947: 12).

Քաղաքին ծանոթանալու ամենահարմար ձևը իմանալն է՝ ինչպես են աշխատում այնտեղ, ինչպես են սիրում և ինչպես են մեռնում /Կամյու, 2012 : 9/:

Տվյալ պարագայում ունենք օտ-ի գործածության հետևյալ ձևերը՝ *comment on y travaille, comment on y aime et comment on y meurt*, որոնք թարգմանված են հետևյալ կերպ՝ *ինչպես են աշխատում այնտեղ, ինչպես են սիրում և ինչպես են մեռնում*՝ մատնանշելով մարդկանց կամ անհատների խմբի, որոնց ինքնությունը կոնկրետացված չէ:

Շարահյուսական տեսանկյունից օտ-ը համարվում է 3-րդ դեմքի անձնական դերանուն՝

- մշտապես հնարավոր է օտ-ը փոխարինել *il/elle* դերանունով՝ առանց ձևաբանական կամ շարահյուսական փոփոխություն առաջացնելու շարույթի մեջ,
- օտ, ինչպես նաև *il/elle* դերանունները կարող են փոխարինել անվանական շարույթի և նախադասության մեջ հանդես գալ միայն ենթակայի պաշտոնում:

Օտ դերանունը ընդհանրական իմաստով հանդես է գալիս մաքսիմների, ասույթների և ասացվածքների մեջ:

Օտ-ի հետ օգտագործվող լրացյալները համաձայնեցվում են սեռով և թվով քերականական անձի կամ անձանց հետ, որին այն վերաբերում է: Եթե օտ-ը վերաբերում է իզական սեռի անձին, նրա հետ օգտագործվող բայը և լրացումը դրվում է իզական սեռով: Այն դեպքում, երբ օտ-ը վերաբերում է հոգնակի թվին, լրացումը համաձայնեցվում է հոգնակի թվով:

Օտ դերանունը նախադասության մեջ մշտապես հանդես է գալիս ենթակայի պաշտոնում: Կարող է փոխարինել բոլոր քերականական ենթակա դերանուններին՝ ընդգծելով այն հեռավորությունը, որը

բանախոսը ցանկանում է հաստատել իր և այլոց միջև կամ ցանկանում է արտահայտել ջերմության, արհամարհանքի կամ հպարտության զգացում: Անորոշ իմաստով *օո-ը* կարող է վերաբերել՝

1. Անձի կամ անձանց, որոնց ինքնությունը չի ցանկանում ճշգրտել:

2. Մի քանի անձանց կամ հավաքական իմաստով արտահայտված մարդկանց խմբի, այս դեպքում համաձայնեցումը կախված է այն անձանցից, որոնց վերաբերում է, այսինքն՝ եթե *օո-ը* վերաբերում է իզական սեռի հոգնակի թվով օգտագործված անձնանց, ապա բայը դրվում է հոգնակի թվով և համաձայնեցվում իզական սեռով:

3. Արտահայտում է ընդհանրական իմաստ:

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, հանգում ենք այն եզրակացության, որ կախված համատեքստից *ՕՈ* դերանունը փոխարինում է գրեթե բոլոր անձնական դերանուններին, արտահայտում է ընդհանրական իմաստ՝ իր մեջ ներառելով խոսողին, խոսակցին կամ մեկ այլ անձի: Ամեն անգամ, երբ այս կամ այն պատճառով ցանկանում են անձի հայտնիությունը թաքցնել, խոսքին հաղորդել անորոշ խորհրդավոր երանգ՝ նպատակադրված կամ անհրաժեշտաբար, գործածում են անորոշ անձնական դերանուն: Ուստի, խոսողը այդ անորոշության մեջ կարող է ներառել իր, խոսակցի կամ երրորդ մեկի անձը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гак В. Г. Теоретическая грамматика французского языка: синтаксис. М.: Высшая школа, 1986.
2. Dubois J., Grammaire structurale du français: nom et pronom. Paris: Librairie Larousse, 1965.
3. Référovskaja E.A., Vassiliéva A.K. Essai de grammaire française. Ленинград: Просвещение, 1973.
4. Riegel M., Pellat J.-Ch., Rioul R. Grammaire méthodique du français. Paris: Librairie Hachette, 1994.
5. Tesnière L., Eléments de syntaxe structurale. Paris: Librairie Larousse, 1976.
6. Wagner R.-L. et Pinchon, J., Grammaire du français classique et moderne. Paris: Librairie Hachette, 2^e éd., 1975.

А. АКОПЯН, Л. САКАНЯН – Значение местоимения *ОН* в современном французском языке. – Местоимение *он* занимает важную роль в системе местоимений французского языка. В зависимости от контекста оно может заменять все личные местоимения, а также включать в себя обобщенную личность, указывать на говорящего или его собеседника и переводиться на армянский язык как *я, ты, он/она* или же *человек/люди*.

A. HAKOBIAN, L. SAKANIAN – “*On*” in the Pronominal System of Modern French. – The pronoun “*on*” has its unique role in the pronominal system of modern French. In spite of the fact that “*on*” is a third person pronoun it can also refer to a speaker or interlocutor. “*On*” can refer to male or female, singular or plural syntagma, but can be used only instead of proper names and be the subject of a sentence. So, every time the speaker wants to conceal identity of a person, either purposeful or for necessity, he/she uses the indefinite personal pronoun.